Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-589-22.05.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

««ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Քրեակատարողական ծառայության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ»:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 20.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 20.1. Քրեակատարողական ծառայողի ատեստավորումը**

1. Քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի ծառայողների ատեստավորումն անցկացվում է հավելավճար հաշվարկելու կամ հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորումից առաջ քրեակատարողական ծառայողն իր ցանկությամբ կարող է վերապատրաստվել: Քրեակատարողական ծառայողը մինչև ատեստավորումը մեկ անգամ իրավունք ունի անցնելու վերապատրաստում: Ատեստավորման նպատակով վերապատրաստումն անցկացվում է միայն առաջին անգամ ատեստավորման համար:

3. Քրեակատարողական ծառայությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի նշանակվելուց հետո քրեակատարողական ծառայողի ատեստավորման արդյունքները պահպանվում են, իսկ մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ պաշտոնի նշանակվելիս ծառայողն ենթակա է ատեստավորման: Մինչև հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորվելն՝ առաջխաղացմամբ

պաշտոնի նշանակված ծառայողը պահպանում է նախորդ պաշտոնում հաշվարկված ատեստավորման արդյունքները: Հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքում՝ քրեակատարողական ծառայությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում, ծառայողներն ատեստավորման ենթակա չեն, իսկ ատեստավորված ծառայողները պահպանում են ատեստավորման արդյունքները, բացառությամբ՝ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալու դեպքերի:

4. Ատեստավորման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

5. Ատեստավորման անցկացման նպատակով համապատասխան նախարարի հրամանով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով:

6. Քրեակատարողական ծառայությունում համապատասխան պաշտոնի առաջին անգամ նշանակված ծառայողը կարող է ատեստավորում անցնել պաշտոնի նշանակվելուց ոչ շուտ, քան վեց ամիս անց: Նա սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորման համար դիմում է վեցամսյա ժամկետը լրանալուց հետո երեք տարվա ընթացքում:

7. Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

8. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ծառայողներն ատեստավորվում են յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ հավելավճարի հաշվարկումը շարունակելու համար: Հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով ատեստավորման համար դիմելու իրավունքը ծառայողի մոտ ծագում է նախորդ ատեստավորման արդյունքներով հավելավճար հաշվարկելու իրավունքը ձեռք բերելու օրվանից երկու տարի հետո: Մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ պաշտոնի նշանակված ծառայողը հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման համար դիմում է պաշտոնի նշանակվելուց հետո մեկ տարվա ընթացքում:

9. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ծառայողն ենթակա է

ատեստավորման ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո և ատեստավորման համար կարող են դիմել եռամսյա ժամկետի ավարտից հետո երեք տարվա ընթացքում: Արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողն ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:

10. Եթե քրեակատարողական ծառայողն ատեստավորման արդյունքներով ստացել է սույն հոդվածի 12-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը, որից հետո նրան տրամադրվել է հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, ապա հավելավճարի հաշվարկման ժամկետն արձակուրդի ժամանակահատվածում կասեցվում է: Այն վերսկսվում է նշված տեսակի արձակուրդից վերադառնալու օրը:

11. Ատեստավորման ենթակա ծառայողն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

12. Ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) ենթակա է հավելավճար հաշվարկելու,

2) ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը,

3) ենթակա չէ հավելավճար հաշվարկելու,

4) ենթակա չէ շարունակելու հավելավճարի հաշվարկումը:

13. Ատեստավորման մասնակցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 12-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացությունը, ատեստավորման համար դիմելու ժամկետի ընթացքում ունեն ատեստավորման համար կրկին դիմելու առնվազն երկու հնարավորություն՝ համաձայն համապատասխան նախարարի կողմից հաստատված ժամանակացույցի:

14. Սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված եզրակացությունները հաստատվում են տվյալ ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

15. Քրեակատարողական ծառայողը պարտադիր ծանոթացվում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Քրեակատարողական ծառայողն իրավունք ունի վերադասության կարգով բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը՝ դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

16. Ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի համաձայն՝ հավելավճար հաշվարկվելու դեպքում ծառայողներին «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և քրեակատարողական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում:»:

Հոդված 3. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 3-րդ կետում «ցուցումներ,» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի կողմից կայացված որոշումների վերանայման արդյունքում կայացնում է որոշումներ,» բառերը.

2. 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«10) քննարկում և փոփոխում է, ուժը կորցրած է ճանաչում կամ վերացնում է համապատասխան քրեակատարողական ծառայողների անօրինական կամ անհիմն հրամանները և ցուցումները.»:

Հոդված 4. Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում՝ ««Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին»» բառերը փոխարինել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»» բառերով:

Հոդված 5. Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«2.Քրեակատարողական ծառայողների նկատմամբ քրեակատարողական ծառայության պետի կողմից համապատասխան նախարարի համաձայնությամբ կարող են կիրառվել նաև խրախուսանքի հետևյալ տեսակները.

1) Արտահերթ կոչման շնորհում, եթե լրացել է հերթական կոչում շնորհելու համար սահմանված ծառայության ժամկետի առնվազն մեկ երրորդը.

2) Տվյալ պաշտոնի համար սահմանված առավելագույն կոչումից մեկ աստիճան բարձր կոչման շնորհում, եթե կրկնակի լրացել է ունեցած կոչումով ծառայության սահմանված ժամկետը:

Սույն մասում նշված խրախուսանքի տեսակները քրեակատարողական ծառայողների նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող են կիրառվել միայն մեկ անգամ:».

Հոդված 6. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 9.1-ին կետով հետևյալ խմբագրությամբ.

«9.1) Սույն օրենքի 20.1-ին հոդվածի 6-րդ մասում սահմանված ժամկետում ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք չբերելու, հավելավճարի հաշվարկումը շարունակելու իրավունք ձեռք չբերելու կամ սույն օրենքի 20.1-ին հոդվածի 13-րդ մասով սահմանված կարգով կրկնակի ատեստավորման համար չդիմելու դեպքում»:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ընդունվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

3. Քրեակատարողական ծառայության այն ծառայողները, ովքեր ցանկություն են հայտնել ատեստավորում անցնել, այդ իրավունքը կարող են իրականացնել 2024 թվականի հունվարի 1-ից հետո՝ համապատասխան նախարարի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-589-22.05.2023-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քրեակատարողական ծառայության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ»:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 20.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«*Հոդված 20.1. Քրեակատարողական ծառայողի ատեստավորումը*

1. Քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի ծառայողների ատեստավորումն անցկացվում է հավելավճար հաշվարկելու կամ հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորումից առաջ ~~Ք~~քրեակատարողական ծառայողն իր ցանկությամբ կարող է վերապատրաստվել: Քրեակատարողական ծառայողը մինչև ատեստավորումը մեկ անգամ իրավունք ունի անցնելու վերապատրաստում: Ատեստավորման նպատակով վերապատրաստումն անցկացվում է միայն առաջին անգամ ատեստավորման համար:

3. Քրեակատարողական ծառայությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի նշանակվելուց հետո քրեակատարողական ծառայողի ատեստավորման արդյունքները պահպանվում են, իսկ մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ պաշտոնի նշանակվելիս ծառայողն ենթակա է ատեստավորման: Մինչև հավելավճար

հաշվարկելու նպատակով ատեստավորվելն՝ առաջխաղացմամբ պաշտոնի նշանակված ծառայողը պահպանում է նախորդ պաշտոնում հաշվարկված ատեստավորման արդյունքները: Հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքում՝ բ-Քրեակատարողական ծառայությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում, ծառայողներն ատեստավորման ենթակա չեն, իսկ ատեստավորված ծառայողները պահպանում են ատեստավորման արդյունքները, բացառությամբ՝ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալու դեպքերի:

4. Ատեստավորման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

5. Ատեստավորման անցկացման նպատակով համապատասխան նախարարի հրամանով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով:

6. Քրեակատարողական ծառայությունում համապատասխան պաշտոնի առաջին անգամ նշանակված ծառայողը կարող է ատեստավորում անցնել պաշտոնի նշանակվելուց ոչ շուտ, քան վեց ամիս անց: Նա սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորման համար դիմում է վեցամսյա ժամկետը լրանալուց հետո երեք տարվա ընթացքում:

7. Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

8. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ծառայողներն ատեստավորվում են յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ հավելավճարի հաշվարկումը շարունակելու համար: Հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով ատեստավորման համար դիմելու իրավունքը ծառայողի մոտ ծագում է նախորդ ատեստավորման արդյունքներով հավելավճար հաշվարկելու իրավունքը ձեռք բերելու օրվանից երկու տարի հետո: Մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ պաշտոնի նշանակված ծառայողը հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման համար դիմում է պաշտոնի նշանակվելուց հետո մեկ տարվա ընթացքում:

9. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ծառայողն ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո: ~~Սույն մասով նախատեսված ծառայողներն~~ և ատեստավորման համար կարող են դիմել եռամսյա ժամկետի ավարտից հետո երեք տարվա ընթացքում: Արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողն ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:

10. Եթե քրեակատարողական ծառայողն ատեստավորման արդյունքներով ստացել է սույն հոդվածի 12-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը, որից հետո նրան տրամադրվել է հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, ապա հավելավճարի հաշվարկման ժամկետն արձակուրդի ժամանակահատվածում կասեցվում է: Այն վերսկսվում է նշված տեսակի արձակուրդից վերադառնալու օրը:

11. Ատեստավորման ենթակա ծառայողն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

12. Ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) ենթակա է հավելավճար հաշվարկելու,

2) ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը,

3) ենթակա չէ հավելավճար հաշվարկելու,

4) ենթակա չէ շարունակելու հավելավճարի հաշվարկումը:

13. Ատեստավորման մասնակցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 12-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացությունը, ատեստավորման համար դիմելու ժամկետի ընթացքում ունեն ատեստավորման համար կրկին դիմելու առնվազն երկու հնարավորություն՝ համաձայն համապատասխան նախարարի կողմից հաստատված ժամանակացույցի:

14. Սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված եզրակացությունները հաստատվում են տվյալ ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

15. Քրեակատարողական ծառայողը պարտադիր ծանոթացվում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Քրեակատարողական ծառայողն իրավունք ունի վերադասության կարգով բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը՝ դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

16. Ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի համաձայն՝ հավելավճար հաշվարկվելու դեպքում ծառայողներին «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և քրեակատարողական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում:»:

Հոդված 3. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 3-րդ կետում «ցուցումներ,» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի կողմից կայացված որոշումների վերանայման արդյունքում կայացնում է որոշումներ,» բառերը.

2. 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«10) քննարկում և փոփոխում է, ուժը կորցրած է ճանաչում կամ վերացնում է համապատասխան քրեակատարողական ծառայողների անօրինական կամ անհիմն հրամանները և ցուցումները.»:

Հոդված 4. Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում՝ ««Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին»» բառերը փոխարինել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»» բառերով:

Հոդված 5. Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«2. Քրեակատարողական ծառայողների նկատմամբ քրեակատարողական ծառայության պետի կողմից համապատասխան նախարարի համաձայնությամբ կարող են կիրառվել նաև խրախուսանքի հետևյալ տեսակները.

1) Արտահերթ կոչման շնորհում, եթե լրացել է հերթական կոչում շնորհելու համար սահմանված ծառայության ժամկետի առնվազն մեկ երրորդը.

2) Տվյալ պաշտոնի համար սահմանված առավելագույն կոչումից մեկ աստիճան բարձր կոչման շնորհում, եթե կրկնակի լրացել է ունեցած կոչումով ծառայության սահմանված ժամկետը:

Սույն մասում նշված խրախուսանքի տեսակները քրեակատարողական ծառայողների նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող են կիրառվել միայն մեկ անգամ:».

Հոդված 6. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 9.1-ին կետով հետևյալ խմբագրությամբ.

«9.1) Սույն օրենքի 20.1-ին հոդվածի 6-րդ մասում սահմանված ժամկետում ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք չբերելու, հավելավճարի հաշվարկումը շարունակելու իրավունք ձեռք չբերելու կամ սույն օրենքի 20.1-ին հոդվածի 13-րդ մասով սահմանված կարգով կրկնակի ատեստավորման համար չդիմելու դեպքում»:

Հոդված 7. ***~~Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ~~***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ընդունվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

3.Քրեակատարողական ծառայության այն ծառայողները, ովքեր ցանկություն են հայտնել ~~սույն օրենքի 20.1-ին հոդվածով նախատեսված~~ ատեստավորումն անցնել, այդ

իրավունքը կարող են իրականացնել 2024 թվականի հունվարի 1-ից հետո՝ համապատասխան նախարարի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-589-22.05.2023-ՊԻ-011/0) ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ(Կ-589[1]-22.05.2023-ՊԻ-011/1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	«Քրեակատարողական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) 1-ին հոդվածում առաջարկում ենք «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) լրիվ անվանման հիշատակումից «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված իրավադրույթը:		
2.	**Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 20.1-ին հոդվածի համարը վերնագրի տեքստից առաջարկում ենք բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված պահանջը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	**Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդված**	Նախագծում հասկացությունների միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 20.1-ին հոդվածի 2-րդ մասում «Քրեակատարողական ծառայողն» ձևակերպումը փոխարինել «քրեակատարողական ծառայողն» ձևակերպմամբ՝ հիմք ընդունելով Օրենքում և Նախագծում կիրառվող ձևը: Նույն դիտարկումը վերաբերելի նաև Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 20.1-ին հոդվածի 3-րդ մասում կիրառված «Քրեակատարողական ծառայությունում» ձևակերպմանը, որն առաջարկում ենք փոխարինել «քրեակատարողական ծառայությունում» ձևակերպմամբ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

4.	**Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 20.1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը սահմանում է հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքում՝ քրեակատարողական ծառայությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում քրեակատարողական ծառայողների ատեստավորման ենթակա չլինելու կանոնը: Մինչդեռ վերը մեջբերված դրույթից հասկանալի չէ՝ արդյոք նշված դեպքերում ծառայողը պահպանում է հավելավճար հաշվարկելու կամ հավելավճարի հաշվարկումը շարունակելու ձեռք բերած իրավունքը: Հետևաբար առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 20.1-ին հոդվածի 3-րդ մասում «ենթակա չեն,» բառերից հետո լրացնել «իսկ ատեստավորված ծառայողները պահպանում են ատեստավորման արդյունքները,» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5.	**Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 20.1-ին հոդվածի 9-րդ մասի երկրորդ նախադասությամբ նշված է, որ այդ դրույթում նշված	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ծառայողներն ատեստավորման համար կարող են դիմել եռամսյա ժամկետի ավարտից հետո երեք տարվա ընթացքում: Հարկ է նկատել, որ քննարկվող նորմում սահմանվում են ինչպես հղիության և ծննդաբերության, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ծառայողների, այնպես էլ արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողների ատեստավորման վերաբերյալ կարգավորումներ: Ընդ որում՝ նշված դեպքերում ատեստավորման համար սահմանված են տարբեր ժամկետներ, մասնավորապես՝ ծառայության անցնելուց երեք ամիս հետո և երկու ամիս հետո, մինչդեռ քննարկվող նորմի երկրորդ նախադասությամբ նշվում է կատարված միայն եռամսյա ժամկետի վերաբերյալ: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 20.1-ին հոդվածի 9-րդ մասի երկրորդ նախադասությամբ կիրառված են «Սույն մասով նախատեսված ծառայողներ» բառերը՝ նշենք, որ այն տարածվում է ոչ միայն նորմի առաջին, այլև		

			երրորդ նախադասությամբ նշված դեպքերի վրա: Հետևաբար առաջարկում ենք վերանայել Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 20.1-ին հոդվածի 9-րդ մասի 2-րդ նախադասության նույն դրույթով նախատեսված քրեակատարողական ծառայողների ատեստավորման համար դիմելու ժամկետի սկզբի մասին նշումը՝ հաշվի առնելով նաև երկամսյա ժամկետը: Ըստ այդմ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 20.1-ին հոդվածի 9-րդ մասի 2-րդ նախադասության «: Սույն մասով նախատեսված ծառայողներ» բառերը փախարինել «և» շաղկապով:		
6.	**Կառավարություն**	**Նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասով Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «ցուցումներ» բառից հետո նախատեսվում է լրացնել «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի կողմից կայացված որոշումների վերանայման արդյունքում կայացնում	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			է որոշումներ,» բառերը: Նշված լրացման արդյունքում Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում կկիրառվի երկու միմյանց հաջորդող ստորակետներ: Հետևաբար առաջարկում ենք քննարկվող լրացումը կատարել ոչ թե «ցուցումներ» բառից հետո, այլ «ցուցումներ,» բառից և կետադրական նշանից հետո:		
7.	**Կառավարություն**	**Նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված կանոնը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8.	**Կառավարություն**	**Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մաս**	Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասում «սույն օրենքի 20.1-ին հոդվածով» բառերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «սույն օրենքն»՝ «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, բաղկացած է 7 հոդվածներից և չունի 20.1-ին հոդված:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ					
	Կառավարություն	**Նախագծի վերնագիր**	«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից հետո առաջարկում ենք լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենքի նախագծով նախատեսվում է կատարել լրացումներ և փոփոխություն:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետի վերջում նախատեսվում է «փրկարարական ծառայողներին» բառերից հետո լրացնել «և քրեակատարողական ծառայողներին» բառերը: Հարկ ենք համարում նշել, որ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետում նշված է «փրկարարական ծառայողների» բառերը, ուստի առաջարկում ենք այն	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			համապատասխանեցել օրենքի ձևակերպմանը, ինչպես նաև նշված կետը վերանայել կետադրական նշանների տեսանկյունից:		
3.	**Կառավարություն**	**Նախագծի 4-րդ հոդված**	Առաջարկում ենք հանել նախագծի 4-րդ հոդվածի վերնագիրը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված կանոնը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:», ինչպես նաև համարակալումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: